ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Մասնագիտություն Երաժշտություն

Թեմա Երաժշտությունը որպես արվեստի տեսակ և որպես դպրոցում դասավանդվող առարկա

Կատարող Ավագյան Ռուզաննա Վլադիմիրի

Ղեկավար Մելիքսեթյան Գոհար մ.գ.թ., դոցենտ

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

Երաժշտությունը որպես արվեստի տեսակ……5

Երաժշտությունը որպես դպրոցում դասավանդվող առարկա……8

Օրինակելի դասի պլան……18

Եզրակացություն……21

Օգտագործված գրականություն……23

Ներածություն

Հետազոտության թեմայի արդիականությունը: Վաղուց արդեն հայտնի իրողություն է այն, որ երաժշտությունն ու արվեստը ազգային մշակութային կարևորագույն արժեքներ են: Ժամանակակից աշխարհում վերջին տարիներին զգալիորեն ավելացել են միջմշակութային երկխոսության և գեղարվեստական հաղորդակցության զարգացման միտումները և տարբեր ազգերի մշակույթների մերձեցման պահանջը: Միևնույն ժամանակ՝ կրթական համակարգում առանձնակի կարևորվում է ազգային ինքնության պահպանումն ու վերահաստատումը: Այս տեսանկյունից՝ ամենազորեղ գործոններից է համարվում արվեստը՝ իր բոլոր տեսակներով, որում ուրույն տեղ ունի նաև երաժշտությունը և այն որպես դպրոցում դասավանդվող առարկա ուսումնասիրելու արդի հիմնահարցերը:

Կրթական համակարգի արդիականացման պայմաններում առանձնահատուկ կարևորություն է ձեռք բերում դպրոցականների ուսուցման և դաստիարակության նոր մոդելների որոնումը, նոր դասընթացների, դպրոցական առարկաների բովանդակության, երաժշտության արդեն հայտնի, ավանդական մեթոդների և տեխնիկայի այլընտրանքային և փոփոխական մոտեցումների մշակումը, իսկ դպրոցականների գեղագիտական դաստիարակությունն ու զարգացումը դառնում են առավել հրատապ:

Մյուս կողմից՝ մշակութային, ժամանցի և սոցիալ-մշակութային ժամանակակից գործունեության մեջ տարեցտարի մեծանում է հետաքրքրությունը ազգային երգարվեստի նկատմամբ: Ուսումնական հաստատությունում երաժշտական արվեստի դասավանդման հիմնահարցերից առանցքայինը երաժշտության դասավանդման մեթոդիկային կատարելապես տիրապետելու անհրաժեշտությունն է:

Կարծում ենք՝ դպրոցական երաժշտական կրթությունը շատ առումներով դեռևս լավագույնին հասնելու տևական ճանապարհ ունի անցնելու… Այդ հարցում մենք կարևորում ենք դպրոցներում երաժշտության դասերի արդյունավետ կազմակերպումն ու անցկացումը: Սա առաջնահերություն է… Եթե դպրոցական

մարդը չի սովորում հասկանալ և գնահատել գեղեցիկը, ապագայում նա չի ընկալի արվեստի հետ շփվելու գեղեցկությունը…

Ազգային ինքնության, ինքնատիպության, ազգապահպանության նշանակալի դերով են հատկորոշվում ազգային արվեստի մասը կազմող երգարվեստը, որը դպրոցում իրականացվում է երաժշտություն առարկայի դասավանդման բազմաստիճան գործընթացում: Այս համատեքստում՝ միջմշակութային հաղորդակցության տիրույթում ազգային ինքնության պահպանման հիմնարար գործառույթների արդյունավետ իրականացման առումով՝ հրատապ է դառնում նաև դպրոցում երաժշտություն առարկայի դասավանդման, երաժշտության՝ իբրև արվեստի տեսակի ուսումնասիրումը, վերագնահատումը ու նորովի արժևորումը:

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել և վերլուծել երաժշտությունը որպես արվեստի տեսակ և որպես դպրոցում դասավանդվող առարկա:

Հետազոտական աշխատանքի խնդիրները: Աշխատանքի նպատակից բխել են հետևյալ հիմնական խնդիրները.

1. Ուսումնասիրել և վերլուծել թեմայի վերաբերյալ ուսումնամեթոդական և գիտական գրականություն:
2. Դիտարկել երաժշտությունը որպես արվեստի տեսակ:
3. Ուսումնասիրել երաժշտությունը որպես դպրոցում դասավանդվող առարկա:

Երաժշտությունը որպես արվեստի տեսակ

Արվեստը լայն տիրույթ է, որն ընդգրկում է մարդկային ստեղծարար գործունեության տարբեր ձևերն ու տեսակները՝ պար, երգ, երաժշտություն, նկարչություն, քանդակագործություն և այլն: Արվեստի տարբեր տեսակներն, ըստ էության, սերտորեն կապված են և փոխլրացվում են միմյանցով: Այս առումով բացառություն չէ նաև երաժշտությունը, մասնավորապես՝ երգարվեստը:

Հին հունարեն «musike» (երաժշտություն) բառը նշանակում է արվեստի մի տեսակ, որն արտացոլում է իրականությունը ձայնային գեղարարվեստական նմուշներում, որոնք անմիջականորեն ազդում են մարդու հոգեկանի վրա: Միևնույն ժամանակ, կարևոր է ընդգծել, որ յուրաքանչյուր ազգի երաժշտական մշակույթն ունի յուրահատկություններ, որոնք դրսևորվում են, առաջին հերթին, ժողովրդական երաժշտության մեջ:

Ինչպես գիտեք, երաժշտությունը հսկայական դեր է խաղացել և խաղում մարդու կյանքում: Նրա հիմնական գործառույթներից մեկը մարդկանց միավորելն է, քանի որ երաժշտության լեզուն հասկանալի է առանց թարգմանության: Բայց ահա հարցը. որտեղի՞ց է ծագել այս առեղծվածային գերող արվեստը՝ «երաժշտությունը»: Պատասխանելով դրան՝ հետազոտողները փաստում են, որ առաջինն առաջացել է ժողովրդական երաժշտությունը: Սկզբում հոգնեցուցիչ ու միապաղաղ աշխատանքին ուղեկցում էին առաջին գործիքների հնչյունները (դրանք հարվածային գործիքներ էին): Հետո հայտնվեց զինվորական ու կուլտային երաժշտություն: Այսպիսով, պատմությունից հայտնի է, որ նույնիսկ Հին Հունաստանում երաժիշտները ազդանշաններ էին տալիս զորքերին և նվագում տաճարներում: Այսպիսով աստիճանաբար ձևավորվեցին երաժշտության երկու հիմնական բաղադրիչ՝ պրոֆեսիոնալ և ժողովրդական: Ժամանակի ընթացքում դրանց ավելացավ երաժշտության բաժանումը պաշտամունքայինի և աշխարհիկի [2, 124]:

Մեկ ժողովրդի (մեկ երկրի) երաժշտությունը, ինչպես գիտեք, կարող է ազդել այլ ժողովուրդների մշակույթի վրա, կրել տեղեկատվական բնույթ: Օրինակ՝ Վերածննդի դարաշրջանից ի վեր Եվրոպայի մեծ մասը հայտնվել է իտալական երաժշտության ազդեցության տակ: Լուսավորության դարաշրջանում գերակշռում էր

կիրքը ֆրանսիական մեղեդիների նկատմամբ, իսկ 20-րդ դարում բոլոր երկրների երաժշտության վրա մեծ ազդեցություն են թողել Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի մշակույթները։

Այս ամենի հետ մեկտեղ պետք է միշտ հիշել, որ երաժշտությունը արվեստ է, որում միշտ միահյուսվում են հինն ու նորը, ազգայինն ու միջազգայինը: Գերմանացի կոմպոզիտոր Բախն առանց իտալացի Վիվալդիի չէր վերածվի համաշխարհային հանճարի, իսկ Չայկովսկին՝ առանց Մոցարտի ու Շումանի, Դեբյուսին՝ առանց Մուսորգսկու, Սկրյաբինը՝ առանց Վագների։ Եվ այս ցանկը կարելի է անվերջ շարունակել [8, 337-338]:

Դպրոցում ուսուցիչը պատկերացում է տալիս երաժշտության մասին՝ որպես արվեստի տեսակ, որը նպաստում է սովորողների ոչ միայն գեղագիտական, այլև բարոյական որակների ձևավորմանը, նրանց ծանոթացնում երգին, պարին, բալետին, օպերային, սիմֆոնիային, երաժշտական գործիքներին՝ ինչպես հայկական (ազգային), այնպես էլ նվագախմբային (միջազգային):

Արվեստը կապված է անհատի հոգու, զգացմունքների հետ, իսկ զգացմունքներին դիպչելու մեծ ներուժ ունի արվեստի տեսակներից հենց երաժշտությունը: Իսկապես, «երաժշտության կարիքն ունեն բոլորը։ Այն կարող է մարդուն ուրախություն պարգևել, լցնել նրան բերկրանքով և երջանկությամբ, կարող է ցնցել, հուզել, արցունքներ և տխրություն առաջացնել» [5, 5]:

Մեծերը երաժշտության մասին ասել են. «Երաժշտությունը ... ապացուցում է այն, որ բառերով չեն կարող կամ գրեթե չեն կարող արտահայտվել: Երաժշտության այս հատկությունը նրա գլխավոր հմայքն է, նրա գլխավոր դյութիչ ուժը… Դա հոգու անմիջական լեզուն է» [5, 5]:

Պ.Ի. Չայկովսկին երաժշտության մասին գրել է. «... Այնտեղ, որտեղ բառերն անզոր են, ի հայտ է գալիս ավելի խոսուն լեզուն՝ երաժշտությունը՝ լիովին զինված» [9, 293]:

«Միայն երաժշտությունն է համաշխարհային լեզու և թարգմանության կարիք չունի, որովհետև հոգին է խոսում» [9, 292]: Լ. Բեթհովենն ասում է. «Երաժշտությունը

ժողովրդի պահանջմունքն է», իսկ Գ. Լոնգֆելլոն գրում է. «Երաժշտությունը մարդկության համընդհանուր լեզուն է»[9, 292-293]:

Երաժշտության տիեզերական վեհության մասին է խոսել Տ. Շոպենը՝ այն բնորոշելով հետևյալ կերպ. «Երաժշտությունը հայրենիք չունի, նրա հայրենիքը տիեզերքն է» [9, 294]: Երաժշտության՝ որպես արվեստի տեսակի էությունը հասկանալու հարցում արժեքավոր է նաև մեծ փիլիսոփա Պլատոնի հետևյալ բնորոշումը. «Երաժշտությունը ոգեշնչում է ողջ աշխարհը, հոգուն թևեր է տալիս, նպաստում երևակայության թռիչքին. երաժշտությունը կյանք և զվարճություն է հաղորդում այն ամենին, ինչ գոյություն ունի... Այն կարելի է անվանել ամեն գեղեցիկի և ամեն վեհի մարմնացում» [9, 294]:

Մարդկության գոյության ողջ ընթացքում երաժշտությունը նրա մշտական ուղեկիցն է եղել: Այն եղել է հին աշխարհի բոլոր ժողովուրդների մշակույթի, արվեստի և հոգևոր կյանքի անբաժանելի մասը: Օրինակ՝ երաժշտությունը ակնառու տեղ է գրավել Հին Հունաստանի հասարակական կյանքում: Հույները կարևոր բարոյական և դաստիարակչական արժեք էին տալիս երաժշտական արվեստին: Այստեղ երաժշտություն դասավանդելը երեխաների դաստիարակության համակարգի մի մասն էր: Երգը և երաժշտական գործիքներ նվագելը օրգանական մասն էր տարբեր քաղաքականությունների (քաղաքների) մարմնամարզական և գեղարվեստական մրցումների՝ օլիմպիական, պյութական, իսթմիական և այլ խաղերի: Եվ, իհարկե, հույների մոտ երաժշտությունը սերտորեն կապված էր պոեզիայի և պարի հետ [4, 186]:

Այսպիսով, երաժշտարվեստը մարդկության գոյության ողջ պատմության ուղեկիցն է եղել, դարեր շարունակ օգտագործվել որպես գեղագիտական, բարոյական, ֆիզիկական, հայրենասիրական դաստիարակության լավագույն միջոց: Տարբեր ժամանակաշրջաններում և երկրներում երաժշտությունը մշտապես եղել է արվեստի կարևոր տեսակներից մեկը, որի դասավանդման միջոցով լուծվել են սերունդների կրթության տարբեր խնդիրներ:

Երաժշտությունը որպես դպրոցում դասավանդվող առարկա

Երգարվեստը զարգացած, ազգային ինքնագիտակցությամբ ուժեղ, ստեղծագործ անհատականություն դաստիարակելու արդյունավետ միջոց է, որը հրատապ է դարձնում այն դպրոցում ուսուցանելու և նրա դաստիարակչական ներուժի ավելի խորը ուսումնասիրությունը: Այս ներուժը բացահայտելու համար յուրաքանչյուր մանկավարժի անհրաժեշտ են որոշակի մանկավարժական մեթոդներ և տեխնիկա: Ուսումնասիրել երաժշտությունը որպես դպրոցում դասավանդվող առարկա, նախևառաջ՝ մենք հասկանում ենք երաժշտությամբ, երգարվեստով երաժշտական դաստիարակությունը, որը գեղագիտական դաստիարակության կարևոր բաղկացուցիչն է: Ապա առաջադրվում է երաժշտության դասավանդման մանկավարժական մեթոդի և դաստիարակչական բնույթի խնդիրը. մենք այն դիտարկում ենք որպես ազգային արվեստի ազգապահպան գործառույթի արդյունավետ իրականացման հիմական գործոններից մեկը:

Երաժշտության ուսուցումը ազգային և համաշխարհային երգարվեստին ու մշակույթին սովորողներին հաղորդակից դարձնելու ուրույն գործընթաց է, որը դպրոցում կազմակերպվում է ուսումնադաստիարակչական որոշակի մոտեցումների և մեթոդների, կրթական մոդելի իրականացման միջոցով:

Ներկայումս էապես փոխվել են նաև հասարակական կյանքի պայմանները և պահանջները, ուստի. «Անհրաժեշտ է ... հաշվի առնել ժամանակակից երեխայի կյանքի սկզբունքորեն նոր պայմանները, որոնք ուսուցիչները չգիտեին նույնիսկ երկու - երեք տասնամյակ առաջ: Այս պայմանները հաշվի առնելը պահանջում է էական ճշգրտում սովորողների դաստիարակության և սոցիալականացման կազմակերպման մոտեցումների մեջ» [3]: Այսինքն՝ խիստ կարևոր է հաշվի առնել արդի կյանքի նոր պայմանները կրտսեր դպրոցականների ուսումնադաստիարակչական, տվյալ դեպքում՝ երաժշտագեղագիտական դաստիարակության գործընթացը կազմակերպելիս: Մյուս կողմից էլ՝ կարևոր է կրտսեր դպրոցականների տարիքային և անհատական աձանձնահատկությունների հաշվի առնումը, քանի որ այս տարիքի աշակերտները հատուկ մանկավարժական ուշադրություն են պահանջում:

Մշակույթը, արվեստը, որպես երեխայի ստեղծագործական ուժերի և առանձնահատկությունների զարգացման որոշակի մակարդակ, դիտվում են որպես գեղագիտական դաստիարակության գործոններից մեկը, որի կապակցությամբ արդիականանում է երաժշտություն առարկայի դասավանդման գործում կրթական գործունեության կազմակերպման նոր մոտեցումների որոնումը:

Հատկապես տարրական դպրոցում երաժշտագեղագիտական դաստիարակության արդի հիմնախնդիրների արդյունավետ կարգավորումը ենթադրում է սովորողողների և ուսուցիչների համատեղ գործունեության մեջ երաժշտական և մշակութային փորձի փոխանցում, որը կնպաստի դպրոցի համար «մանկավարժական բաղադրիչի»՝ նոր մոդելի որոնմանը:

Հաշվի առնելով վերը ասվածը՝ պարզորոշ է դառնում արդի դպրոցի ուսուցչական անձնակազմի առջև դրված խնդիրը, որը ենթադրում է գեղագիտական դաստիարակության գործընթացի բովանդակության վերանայում, ներառյալ՝ երաժշտության դասավանդումը, որը պահանջում է նոր գաղափարների և ձևերի ներդրում ուսումնական հաստատությունում երաժշտության դասավանդման փորձում: Անընդհատ կրթության՝ որպես կրթություն ամբողջ կյանքի ընթացքում հայեցակարգի ի հայտ գալով՝ անձն իր հետաքրքրություններով և հնարավորություններով դրվել է կրթադաստիարակչական հարացույցի կենտրոնում:

Համապատասխանաբար՝ երաժշտության դասավանդման դպրոցական նոր մոդելում ամենակարևոր տեղն զբաղեցնում է երեխայի անհատականությունը՝ «գեղեցկության համընդհանուր զգացումով՝ մարդու վերաբերմունքն աշխարհին ընդհանրապես» [7]:

Երաժշտությունը որպես դպրոցում դասավանդվող առարկա նպատակաուղղվում է երեխայի երաժշտական կրթությանն ու դաստիարակությանը, որը դպրոցում գեղարվեստական տարածքի հուզական-ճանաչողական և գործունեություն-գործնական զարգացման, յուրացման նպատակաուղղված գործընթաց է, ներառյալ՝ արվեստի տարածքը: Այլ կերպ ասած՝ սա ենթադրում է երաժշտական և գեղագիտական մշակույթի հարստության փոխակերպում դպրոցականի անձի ներաշխարհի հարստության, այնուհետև ձեռք բերված և

կուտակված փորձի փոխադրում շրջակա հասարակության մեջ, որն էլ նպաստում է երեխայի գեղագիտական վերաբերմունքի ձևավորմանը դեպի իրականություն և գեղագիտական գործունեություն [6, 143:

Դպրոցում արդի կրթական պահանջներին համապատասխան երաժշտագեղագիտական դաստիարակության «մանկավարժական բաղադրիչը» ենթադրում է որոշակի ունակություն, այն է՝ երեխաներին ներգրավել երաժշտագեղագիտական գործունեության գործընթացում, օրինակ՝ նոր տեղեկատվության որոնում, երաժշտական ստեղծագործությունների ունկնդրում և կատարում, երաժշտության և արվեստի մասին զրույցների ունկնդրում:

Երաժշտության դասավանդումը դպրոցում մի գործընթաց է, որով իրականացվում է սերունդների հաղորդակցումը առաջատար երաժիշտների ու երգահանների երաժշտական արվեստին, նրանց փորձին և գաղափարներին՝ վերջիններիս իմաստավորումն ու ընկալումը ժամանակակից կրթական հարացույցի միջոցով:

Երաժշտության դասավանդումը դպրոցում ուղղվում է երաժշտական և գեղագիտական դաստիարակության նպատակի իրականացմանը և դպրոցականների մեջ երաժշտական արվեստի հիմքերը՝ որպես հոգևոր մշակույթի մաս ձևավորելուն:

Երաժշտության դասավանդման գործընթացը դպրոցում ենթադրում է մի շարք խնդիրների լուծում.

Դաստիարակչական խնդիրներ – Այս խնդիրների լուծումը ենթադրում է երաժշտության նկատմամբ դպրոցականների հուզական-արժեքային վերաբերմունքի խթանում (երաժշտական և գեղագիտական զգացմունքների զարգացում, երաժշտական արվեստի հետ հաղորդակցության անհրաժեշտություն, ճաշակի և գեղագիտական արժեքների նկատմամբ վերաբերմունքի ձևավորում):

Ուսումնական խնդիրներ – Այս խնդիրների կարգավորումը ներառում է երաժշտության նկատմամբ գիտակցված վերաբերմունքի ձևավորման աշխատանքների իրականացում (երաժշտական գիտելիքների ձևավորում, դասական, ժողովրդական և ժամանակակից երաժշտության լավագույն օրինակների

ուսումնասիրություն և երաժշտության մասին գիտելիքներ՝ երաժշտական արտահայտչականության միջոցներ, ժանրեր, ձևեր, ոճեր, երաժշտական նոտագրման առանձնահատկություններ, ինչպես նաև՝ երաժշտական գիտելիքները ինքնուրույն կիրառելու ունակություն):

Զարգացնող խնդիրներ - Երաժշտության նկատմամբ գործունեության-գործնական վերաբերմունքի ձևավորում (երաժշտական ստեղծագործություններ կատարելու և լսելու հմտությունների ձևավորում ու զարգացում): Այս խնդիրների լուծումը ենթադրում է նաև արվեստի հետ հաղորդակցության մանկավարժորեն կազմակերպված գործընթացում սովորողների անձնային որակների դաստիարակություն:

Տարրական դպրոցում կրտսեր դպրոցականների գեղագիտական և երաժշտական դաստիարակության գործընթացի հաջողությունը՝ ինտեգրված կրթության համատեքստում, մեծապես կախված է հետևյալ գործոններից.

1. կրթության և դաստիարակության կազմակերպումը՝ հաշվի առնելով ազգային-տարածաշրջանային բաղադրիչը, որը ներկայացված է ուսումնական ծրագրերում,
2. սովորողների և նրանց ծնողների հետ համագործակցությունը:

Տարրական դպրոցում երաժշտության՝ որպես դպրոցում դասավանդվող առարկայի առաջնահերթ ուղղությունը մշակութային զարգացման միջավայրի ստեղծումն է՝ հիմնված արվեստի, մշակույթի և առողջության պահպանման տեխնոլոգիաների տարածաշրջանային բաղադրիչի վրա:

Երաժշտության դասավանդումը դպրոցում հնարավորություն է տալիս երեխաներին հաղորդակցվել գեղեցիկի աշխարհին, մշակութային կյանքին՝ նրանց կյանքն առավել բազմազան ու հարուստ դարձնում՝ հաղորդակից դարձնելով նաև հանրության կենսափորձին, այն ձևավորում է նաև նրանց ստեղծագործական կարողությունները, խթանում ակտիվ ստեղծագործական գործունեությունը: Օրինակ՝ երաժշտական, գեղագիտական և ֆիզիկական դաստիարակության տարրերի համակցումով, կարծում ենք՝ կարելի է խթանել կրտսեր դպրոցականների

ստեղծագործական ու հաղորդակցական ակտիվությունը՝ միաժամանակ օժանդակելով նրանց սոցիալ-հոգեբանական ու ֆիզիկական զարգացմանը: Երաժշտության դասավանդումը ինչպես առանձին, այնպես էլ մյուս ուսումնական առարկաների ինտեգրմամբ՝ առանձնակի նշանակություն ունի նաև երեխաների գեղագիտական ճաշակը ձևավորելու, աշխարհայացքն ընդլայնելու, գեղարվեստական ընկալման մշակույթը զարգացնելու, երեխաների հետ հաղորդակցվելու սահմանափակումները վերացնելու և հասարակությանն արդյունավետորեն հարմարվելու համար: Ստեղծագործական գործունեությունը խթանում է երեխայի երևակայությունը, հարստացնում այն, մեծացնում նրա ձգտումը դեպի գեղեցիկը, դրականը, մեծ ուրախություն պարգևում: Որպես կանոն՝ հենց երաժշտական-բեմական արվեստն է իր բազմազան ժանրերով նախընտրելի երեխայի գեղագիտական զարգացման համար: Կարելի է պնդել, որ երաժշտական բեմադրությունները (երաժշտական և բեմական արվեստի համադրում) մեծ նշանակություն կարող են ունենալ երեխաների գեղագիտական զարգացման, խոսքի բարելավման, հաղորդակցական կարողությունների ձևավորման ու վերականգնման, խոսքի զարգացման համար: Երաժշտական դաստիարակության բովանդակությունը կազմող աշխատանքները՝ երգ, պար, երաժշտական գործիքների գործածում, վոկալ աշխատանքներ, հնարավորություն են տալիս հեշտությամբ շփվելու տարբեր տարիքային խմբերի մարդկանց հետ, որը երեխաների անձի ձևավորման համար կարևոր նշանակություն ունի: Այն նաև մեծապես նպաստում է հաղորդակցական կարողությունների զարգացմանը:

Երաժտության դասավանդման մեջ հատկապես արժեքավոր է միջառարկայական կապերի օգտագործումը, երաժշտության կապը նկարչության և գրականության հետ, քանի որ մարդու բնավորությունը բացահայտվում է երաժշտության մեջ, ինչպես նաև՝ գրականության և նկարչության մեջ, և պատմության հետ կապն օգնում է տեղեկություններ տալ ժողովրդական երգիչների և երաժիշտների, հայ կոմպոզիտորների և երաժշտական ստեղծագործությունների կատարողների մասին:

Դպրոցում երաժշտության դասավանդման արդյունավետության համար նշանակալի է միջառարկայական կապերի ստեղծումը, օրինակ՝ գրականության, նկարչության, պատմության հետ: Ասպես՝ Կոմիտասի երաժշտարվեստին երեխաներին հաղորդակից դարձնելով՝ կարելի է իրականացնել ազգային երգ ու պարի դաստիարակչական գործառույթները՝ բացահայտելով նաև որոշակի երաժշտական գործիքի (թառ, դաիրա, ֆլեյտա և այլն) հնչողության առանձնահատկությունները, դրա ծագումնաբանությունը կամ նախապատմությունը, դրանց ստեղծման դարաշրջանի իրադարձությունները, դարերի ընթացքում դրանց կրած փոփոխությունները, ձևավորելով նաև դրա կարևոր նշանակության երեխաների գիտակցումը:

Միջառարկայական կապերի միջոցով երաժշտություն դասավանդումն արդյունավետ կարող է լինել նաև «Ես և շրջակա աշխարհը» առարկայի դաստիարակչական հնարավորությունների կիրառման ճանապարհով: Օրինակ՝ տարվա եղանակների մասին երաժշտական, ինչպես նաև՝ տարվա եղանակներ թեմայով նկարչական գործունեության (կերպարվեստի) նպատակային իրականացումը մի կողմից՝ կօգնի երեխաներին սովորեցնել գեղեցիկ վերարտադրել տարվա եղանակների գույների համադրությունը, զարգացնել վառ, գունեղ նկարներից ուրախություն, բերկրանքի զգացումներ ապրելու և այն գեղագիտորեն արտահայտելու երեխաների կարողությունը, մյուս կողմից՝ ընդլայնելու և հարստացնելու նրանց պատկերացումներն ու գիտելիքները տարվա եղանակների մասին: Այս նպատակով՝ կարելի է նաև օգտագործել դիդակտիկ պարագաներ, օրինակ՝ տարվա եղանակները պատկերող նկարների ժողովածու, Մ. Սարյանի «Ծաղիկներ» կամ այլ գեղանկարչի ստեղծագործությունների վերատպություն: Մեծանուն գեղանկարչի հայրենասիրական ոգով տոգորված դիմանկարները, բնանկարները, նրա կտավների վառ գունապնակը, դրանց դիտումը հնարավորություն կտա երեխաներին ինքնուրույն գնահատել և ճիշտ արժևորել համամարդկային կարևոր արժեքները՝ մարդասիրություն, հայրենասիրություն, հայրենի եզերքի ու հոգևոր արժեքների ճանաչում և կարևորում, գործի նվիրում, կյանքում բարին գործելու, մնայուն արժեքներ ստեղծելու կարևորում և գիտակցում: Նման աշխատանքը նաև նպաստում է դպրոցականների գեղագիտական ճաշակը և

արժեքային համակարգը ձևավորելուն: Այն նաև կարևոր է երաժշտագեղագիտական դաստիարակությունը ոչ միայն գիտելիքներ հաղորդելու, այլև գեղագիտական հույզերի և զգացմունքների դաստիարակման, գեղեցիկի, արվեստի մասին տարրական գիտելիքներ փոխանցելու, նկարչական ունակությունները և կարողությունները, երաժշտական ընդունակությունները զարգացնելու, երաժշտառիթմիկ կարողությունները ձևավորելու լավագույն միջոց դարձնելու համար: Միջառարկայական կապերի միջոցով նաև «Ես և շրջակա աշխարհը» առարկայի դաստիարակչական հնարավորությունների կիրառմամբ հնարավոր է երաժշտության դասավանդումն իրականացնել էկոլոգիական դաստիարակության տարրերի ինտեգրումով, ինչպես՝ ծառ տնկելու գործընթացը՝ երաժշտական կատարման ուղեկցությամբ: Երաժշտության դասի ավարտին կազմակերպվում է «Բարության ծառ» երգի ունկնդրում և դրա ներքո միաժամանակ բոլոր երեխաների մասնակցությամբ՝ ծառատունկ՝ նրանց մեջ բնության նկատմամբ սեր և հոգատար վերաբերմունք դաստիարակելու համար: Վերջինս կարող է նպաստել երեխաների էկոլոգիական կրթվածության աստիճանի ավելացմանը, բնության օգտակարության, այն պահպանելու կարևորության նրանց գիտակցումը ձևավորելուն, բնության մեջ ճիշտ վարվելականոնների իմացությանը՝ դաստիարակելով սեր և հոգատար վերաբերմունք դեպի բնությունը, մասնավորապես՝ ծառերն ու դրանց խնամքը:

Միջառարկայական կապերի ստեղծումը նպաստում է գեղագիտական դաստիարակության խնդիրներն առավել արդյունավետ լուծելուն, որոնցից հատկանշական են՝ գեղագիտական զգացմունքների դաստիարակումը, գեղագիտական ակտիվության ձևավորումը, գեղագիտական ճաշակի ձևավորումը, ստեղծագործական կարողությունների զարգացումը, արվեստի նկատմամբ հետաքրքրասիրության և նախասիրության դաստիարակումը, գեղագիտական պահանջմունքների ձևավորումը և այլն [1, 133]:

Դպրոցում երաժշտության՝ որպես առարկայի դասավանդումը հիմնականում իրականացվում է խաղերի, վարժությունների (երաժշտական-ռիթմիկ խաղեր, երաժշտական-ռիթմիկ պարեր, երաժշտական-ռիթմիկ շարժումներ, երաժշտական-խոսքային գործունեություն երգեցողության) միջոցով, որոնց գլխավոր նպատակը ուսուցողական է և զարգացնող: Երաժշտության դասերին շեշտադրվում է

երեխաների նպատակաուղղված երաժշտական կրթությունը, այն է՝ երեխայի կողմից երաժշտական գործունեության հմտություններին և կարողություններին տիրապետելը, նրա երաժշտական կարողությունները զարգացնելը, այսինքն՝ երաժշտության դասի հիմնական տարրերը նպատակաուղղվում են երաժշտական խնդիրների լուծման միջոցով գեղագիտական դաստիարակության խնդիրների լուծմանը: Վերջինս առավել արդյունավետ է իրականացնել միջառարկայական կապերի միջոցով: Այսինքն՝ երաժշտության դասավանդումը դպրոցում, հաշվի առնելով երեխայի առաջատար գործունեության տեսակը և հենվելով դրա վրա, կարևորվում է գործունեության մյուս ձևերը զարգացնելու համար: Նկարչական հակումներ ունեցող երեխային կարելի է հանձնարարել նկարել, պատկերել երգի թեմային, կամ հնչող երաժշտության տրամադրությանը, կենդանական ձայններին համապատասխան կամ դրանք ներառող տեսարան կամ խորհրդանիշ: Սա կարող է խթանել նաև ստեղծագործական գործընթացների զարգացումը, բավարարել երեխայի գեղարվեստական-գեղագիտական պահանջմունքները՝ որպես երեխայի ինքնարտահայտման միջոց:

Դպրոցում «Երաժշտություն» առարկայի դասավանդման համար նախատեսված դասագրքերում զետեղված են տարբեր ժանրերի երգեր՝ հերոսական, էպիկական, քնարական, պարային, ինչպես նաև՝ տարբեր թեմաներով երգեր՝ հայրենասիրական, ազգային, ժողովրդական, օրորոցային և այլն: Տրված է հարուստ փաստական նյութ կոմպոզիտորների, երաժիշտների, կատարողների, մանկավարժների մասին: Երաժշտության դասագրքերում ուսուցանվող երգերին կցվում է հավելյալ տեղեկություն՝ արվեստագետների ու մշակույթի գործիչների նյութերով ու լուսանկարներով: Երաժշտության գործնական դասավանդման և կատարման համար դպրոցական դասագրքերը ներառում են նոտաներ և բառեր, օգտագործվում են հայ և այլազգի նկարիչների նկարների վերարտտպությունները: Հատկապես կարևոր է երաժշտության ուսումնասիրությունը այլ արվեստների և առարկաների հետ փոխազդեցության մեջ, ինչպիսիք են գրականությունը, կերպարվեստը, պատմությունը: Այդպիսի հնարավորություն էն ընձեռում երաժշտության դասավանդման համար նախատեսված դպրոցական դասագրքերը: Վերջիններս վիթխարի նյութ են տալիս՝ ուսուցչին հնարավորություն տալով

դիտարկել «երաժշտությունը» որպես ուսումնական առարկա և արվեստի տեսակ, երաժշտական ժանրեր և երաժշտական արտահայտչականության միջոցներ. ապահովել միջառարկայական կապեր (երաժշտություն, գրականություն, պատմություն): Ուսուցիչը հնարավորություն ունի երաժշտության դասավանդման դպրոցական աշխատանքը կազմակերպելու այնպես, որ սովորողները կարողանան ոչ միայն հասկանալ երաժշտական ժանրեն ու արտահայտչականության միջոցները, այլև ինքնուրույն կազմակերպեն աշխատանքը: Ուսուցչի աշխատանքն առավել արդյունավետ է դառնում, երբ երաժշտության դասավանդումը ուղեկցվում է կոմպոզիտորների, երաժիշտների, կատարողների մասին տեսազննական նյութերով:

Այս հարցի առումով կարևոր է նաև այն, որ դասագրքերում բոլոր տեքստերն ուղեկցվում են իրենց նոտաներով, որն, իր հերթին, շատ կարևոր է գործնական պարապմունքների համար:

Այսպիսով՝ երաժշտության դասավանդումը դպրոցում ինքնանպատակ չէ, այլ նպատակաուղղվում է երգարվեստի, գեղագիտության կարևոր բաղադրիչների միջոցով սովորողների կողմից հոգևոր արժեքների յուրացմանը, նրանց գեղարվեստական-գեղագիտական ճաշակի և ստեղծագործական ներուժի, ազգային արվեստն ու մշակութային արժեքները ճիշտ արժևորելու կարողության զարգացմանը, նրանց հայեցի դաստիարակությանը: Կարելի է եզրակացնել, որ երաժշտության դասավանդման և երաժշտագեղագիտական դաստիարակության հիմնաքարը ազգային երգարվեստի կատարման կարևոր ու անհրաժեշտ հմտությունների ձևավորումն ու զարգացումն է, հաղորդակցումը ժողովրդական ու ազգային երաժշտական ժառանգությանը:

Երաժշտության դասավանդումը դպրոցում պետք է երեխաների գեղագիտական, բարոյական, մտավոր և ֆիզիկական դաստիարակության, լավը լինելու ձգտում ձևավորելու միջոց դարձնել: Իսկ այս խնդիրները կարգավորելու և ուսումնական-դաստիարակչական գործընթացը դրանց լուծմանը նպատակաուղղելու համար մեծապես կարևորվում է համապատասխան կրթական պայմանների ստեղծումը, որը ենթադրում է ուսումնական գործընթացի մեթոդական զինում և դասապրոցեսում ուսուցման կազմակերպման արդյունավետ եղանակների, նորարական միջոցների, մոտեցումների, խթանող մեթոդների ներառում:

Ստորև բերվում է մեր կողմից պլանավորված օրինակելի դասի պլան՝ միջառարկայական կապի ստեղծման կարևորմամբ:

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԴԱՍԻ ՊԼԱՆ

Երաժշտությունը արվեստի ամենագեղեցիկ և ամենազգացմունքային տեսակներից մեկն է: Հայ կոմպոզիտորները գրել են բազմաթիվ ստեղծագործություններ, որոնք հարստացրել են հայ երգարվեստը, երաժշտարվեստը և մշակույթը: Դրանց վառ օրինակներից են նաև կոմպոզիտոր Ռոմանոս Մելիքյանի ստեղծագործությունները:

Դասի թեման՝ Ռոմանոս Մելիքյանի կյանքը և ստեղծագործությունը:

Դասարան՝ 2-րդ

Երգեցողություն՝ Ռ. Մելիքյանի «Գարուն եկավ» երգը:

Ունկնդրում՝ Ռ. Մելիքյանի «Կլոր պար» երգը:

Նոտագրություն՝ հատված Ռ. Մելիքյանի «Գարուն եկավ» երգից

Դասի նպատակը՝

Աշակերտներին հաղորդել տեղեկատվություն հայ կոմպոզիտորի կյանքի և ստեղծագործությունների վերաբերյալ: Նրանց տալ գիտելիքներ ուսուցանվող նոր երգի մասին:

Նոր երգի ուսուցմամբ կզարգանա նաև նրանց ռիթմի զգացողությունը և ճիշտ երգեցողության շնորհիվ՝ կհոկվի աշակերտների վոկալ ձայնն ու լսողությունը:

Խնդիրները՝

- Զարգացնել աշակերտների երաժշտական ճաշակը և ավելացնել նրանց երաժշտական գիտելիքները:
- Ааարգացնել ռիթմի զգացողությունը:
- Հղկել աշակերտների վոկալ ձայնն ու լսողությունը:

Դասի ընթացքը

Աշակերտների հետ զրուցել նախորդ դասի շուրջ: Սկսել նոր դասի մատուցումը: Ներկայացնել Ռ. Մելիքյանի Մասին տեղեկություն: Ցուցադրել նրա

կյանքի և երգարվեստի մասին պատմող տեսասահիկ: Երեխաներին ցուցադրել ուսուցանվող երգի և նրա հեղինակի մասին 2 րոպեանոց տեսանյութ:

Ունկնդրել «Կլոր պար» երգը: Նախքան նոր երգի ուսուցումը կատարել վոկալ ձայնավարժություններ, որոնք կնպաստեն նրանց մաքուր երգեցողությանը:

Նոր երգը ուսուցանել ֆրազներով: Ուսուցիչը երգում է, աշակերտները խմբային կրկնում են:

Ամբողջ երգը սովորելուն հաջորդում է երգի ամբողջական կատարումն ամբողջ դասարանով: Մաքուր երգել կարողացող աշակերտները նոր ուսուցանված երգը կարող են երգել որպես մենակատար:

Նոտատերում կատարվում է ուսուցանվող երգի նոտաներից հատվածի նոտագրում:



Քանի որ երգը գարնան մասին է, ստեղծել միջառարկայական կապ գրականության հետ՝ ծանոթացնելով Հովհաննես Շիրազի «Գարնանամուտ» ստեղծագործությանը: Այն կնպաստի, որ աշակերտները ավելի լավ պատկերացնեն բնության գեղեցկությունը և դրա արտահայտությունը երգարվեստում:

Աշակերտները կտեսնեն, որ բացի գարնանային երգերից՝ մենք ունենք նաև հրաշալի գրական ստեղծագործություններ՝ գարնանային պատկերավոր տեսարաններ դրվագող և նկարագրող բանաստեղծության տեսքով: Ուսուցիչը

մատնանշում է, որ գրական բազում ստեղծագործություններ դարձել են երգ՝ հայ հանճարեղ կոմպոզիտորների երաժշտական մշակումների շնորհիվ:

Ամփոփում

Դասի վերջում կազմակերպել երաժշտառիթմիկ խաղ, որի ընթացքում աշակերտները նոր ուսուցանվող երգի հետ համահունչ կկատարեն ռիթմիկ ծափեր, որոնք կզարգացնեն նրանց ռիթմի զգացողությունը:

Դասի նպատակն ու դրանից բխող խնդիրներն իրագործվեցին: Այն օգտակար եղավ աշակերտներին, քանի որ նրանք ծանոթացան հայ մեծանուն կոմպոզիտորի հետ և արժևորեցին նրա գործերի կարևորությունը: Նրանք սովորեցին Ռ. Մելիքյանի «Գարուն եկավ» երգը և նրանց մեջ սերմանվեց սեր դեպի հայ երգն ու մշակույթը:

Եզրակացություն

Ամփոփելով սույն հետազոտական աշխատանքը՝ հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

1. Երաժշտությունը որպես արվեստի տեսակ գոյություն է ունեցել մարդկության գոյության ողջ ընթացքում՝ սկզբնավորվելով դեռևս անտիկ ժամանակներից:
2. Դպրոցում երաժշտության դասավանդման գործընթացն ուղղվում է դպրոցականների երաժշտագեղագիտական, բարոյական, ֆիզիկական, հայրենասիրական դաստիարակությանը: Այս հարցում մենք կարևորում են միջառարկայական կապերը և այդ նպատակով առաջարկում նաև ուսումնադիտողական, դիդակտիկ նյութերի ու պարագաների կիրառումը, ստեղծագործական և կատարողական գործունեության իրականացումը:
3. Ուսումնադիտողական նյութերի և դիդակտիկ պարագաների գործնական ցուցադրության օգտագործումը տեսողական ընկալմամբ մատուցվող նյութի արդյունավետության, ինչպես նաև գեղեցիկն ընդօրինակելու լավագույն միջոցներից է:
4. Երաժշտության դասավանդման գործընթացի արդյունավետությունն ապահովելու հիմնական միջոցներից է միջառարկայակն կապերի ստեղծումը: Նման գործունեության միջոցով դպրոցականներն ստանում են ոչ միայն երաժշտական, այլև էկոլոգիական, բարոյական, աշխատանքային, ֆիզիկական, մտավոր, գեղագիտական դաստիարակություն և դրանց համապատասխան գիտելիքներ, ձևավորվում են գործունեության այդ ձևերին բնորոշ կարողություններ և հմտություններ:
5. Ելնելով վերոնշյալից՝ առաջարկում ենք դպրոցում երաժշտական գիտելիքների ուսուցումն ու դաստիարակությունը կազմակերպել ինտեգրված գործունեության միջոցով:
6. Երաժշտական գործունեությունն իբրև ուսուցման և դաստիարակության միջոց առավել արդյունավետ կլինի եթե իրականացվի համակացված պարապմունքների ընթացքում՝ այլ մեթոդների ու մեթոդիկաների, խաղերի,

երգի, գրական ստեղծագործությունների, զննական պարագաների օգտագործման հետ զուգակցումով:

7. Դպրոցում երաժշտության դասավանդումը ուղղվում է նաև դպրոցականների զգացմունքային, մտավոր, գեղագիտական զարգացմանն ու դրանցում ներառվող համապատասխան կարողությունների, հմտությունների և ունակությունների ձևավորմանը:
8. Երաժշտության դասավանդումը դպրոցում ինքնանպատակ չէ, այլ նպատակաուղղվում է երգարվեստի, գեղագիտության կարևոր բաղադրիչների միջոցով սովորողների կողմից հոգևոր արժեքների յուրացմանը, նրանց գեղարվեստական-գեղագիտական ճաշակի և ստեղծագործական ներուժի, ազգային արվեստն ու մշակութային արժեքները ճիշտ արժևորելու կարողության զարգացմանը, նրանց հայեցի դաստիարակությանը:

Օգտագործված գրականություն

1. Մանուկյան Ա., Մանուկյան Ս., Մանկավարժական տեխնիկա և տեխնոլոգիա, Ե., 2000:
2. Багаев М.Х., Бацаева И.С. Школьное музыкальное образование. Известия Чеченского государственного университета. Учредители: Чеченский государственный университет им. А.А. Кадырова. 2020, №2 (28), с. 123-127.
3. Бондаревская Е. В. Воспитание как возрождение гражданина, человека культуры и нравственности (Основные положения концепции воспитания в изменяющихся социальных условиях). М., 1994.
4. Гладкий В.Д. Древний мир. Энциклопедический словарь. М.: Изд. Центрполиграф, 2001, 975 с.
5. Григорович В.Б. Великие музыканты Западной Европы: И.С. Бах, И. Гайдн, В.А. Моцарт, Л.Бетховен. Хрестоматия для учащихся старших классов. М.: Просвещение, 1982, 224 с.
6. Дмитрик Т.Д. Музыкально-эстетическое воспитание учащихся начальной школы в условиях научно-творческой лаборатории Музыкальная экология. Традиции и инновации в современном культурно-образовательном пространстве. Издательство: Московский педагогический государственный университет. М., 2021, с. 143.
7. Крылова Н. Б. Культурология образования // Новые ценности образования. 2000. № 10.
8. История мировой культуры. Новейший справочник школьника. Сост. Ф.С. Капица, Т.М. Колядич. М.: СЛОВО, Эксмо, 2007, 608 с.
9. Энциклопедия мысли. Сборник мыслей, изречений, афоризмов, максимов, парадоксов, эпиграмм (Сост. О. Азарьев, Л. Демидова, М. Наникишвили, Н. Хоромин). Изд. перераб. и значительно дополненное. Симферополь: Таврида, 1996, 688 с.